

Լ. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ  
ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 33:338(042)  
ԳՄԴ 65+65.9(2)-1  
Պ 505

Հրատարակության է երաշխավորել  
ՀՊՏՀ տնտեսական պատմության և  
իրավագիտության ամբիոնը

**Պետրոսյան Լ.Պ.**

Պ 505 Արդյունաբերական հեղաշրջումը և բուրժուական հարաբերու-  
թյունների հաստատումը Անգլիայում: Դասախոսության տեքստ/  
Լ.Պ.Պետրոսյան, ՀՊՏՀ. -եր.: Տնտեսագետ, 2011.- 16 էջ:

Դասախոսության թեման օգնականը կարող է լինել համաշխար-  
հային տնտեսության պատմությունն ուսումնասիրողների համար:  
Աշխատանքում Անգլիայի օրինակով բացահայտված են բուր-  
ժուական հարաբերությունների զարգացման անհրաժեշտ պայ-  
մանները:

ՀՊՏՀ գրադարան



000000649

ՀՏԴ 33:338(042)  
ԳՄԴ 65+65.9(2)-1

13988(74)

ԳԿ

ISBN 978-9939-61-032-0

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2011

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

XVIII դարում Արևմտյան Եվրոպայում միջնադարյան հարաբերություններից անցում էր կատարվում կապիտալիստականին: Ավելի արագ դա տեղի էր ունենում Անգլիայում, որտեղ բուրժուական հարաբերությունների զարգացման համար սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններն առավել բարենպաստ էին: Դրանցից հիմնականներն էին կապիտալի նախասկզբնական կուտակաման բարձր տեմպերը, մանուֆակտուրային արտադրության զարգացումը, բուրժուաների տնտեսական ու քաղաքական դերի մեծացումը և հակաֆեոդալական հեղափոխությունը, ինչպես նաև արդյունաբերական հեղաշրջումը:

\*\*\*

Կապիտալի նախասկզբնական կուտակումը առանձին մարդկանց (առևտրականների, արհեստավորների, վաշխառուների) հարստացման և նրանց դրամական միջոցների կուտակման գործընթաց է: Այն կարևոր նախապայման է հետագայում կապիտալիստական ձեռներեցություն ծավալելու համար: Մյուս կողմից՝ առաջանում է վարձու աշխատուժի բանակը՝ հիմնականում գյուղացիության բռնի ունեզրկման հետևանքով:

Այս գործընթացները Արևմտյան Եվրոպայում տեղի են ունեցել XVI-XVIII դդ.՝ ընդգրկելով ֆեոդալիզմի քայքայումից մինչև բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանը:

Կապիտալի նախասկզբնական կուտակման հետևանքով առաջացան բուրժուական արտադրահարաբերությունների

զարգացման համար անհրաժեշտ կապիտալի, աշխատուժի և հումքի շուկաները:

Անգլիայում այդ գործընթացը տեղի էր ունենում դասական ձևով:

XVI դարի սկզբին Անգլիան հետամնաց ագրարային երկիր էր՝ 3 մլն բնակչությամբ, որի հիմնական զբաղմունքը ոչխարաբուծությունն էր: Բրդի մեծ մասը արտահանվում էր, մնացածը՝ մշակվում երկրում: Արագ զարգանում էր մահուդագործությունը, ստեղծվում էին մանուֆակտուրաներ, և XVI դ. արդեն անգլիական մահուդը համարվում էր ամենաբարձրորակն ու էժանը և մեծ պահանջարկ ուներ:

Մահուդագործությամբ էին զբաղվում նաև Նիդեռլանդներից, Ֆրանսիայից և Գերմանիայից ներգաղթող հնուտ վարպետները, որոնք իրենց երկրներում հալածվում էին բողոքական դավանանքի համար:

Մահուդագործությունը տարածվում էր նաև գյուղական վայրերում, որտեղ չկային համքարային սահմանափակումներ, օգտագործում էին հողագուրկ գյուղացիների էժան աշխատուժը և տեղի հարուստ հումքային ռեսուրսները:

Բրդի պահանջարկի մեծացման հետևանքով բարձրանում էր և գինը: Դա խթանում էր ոչխարաբուծության զարգացումը, որի համար պահանջվում էին արոտավայրեր: Արդեն XIII-XIV դդ. հողատեր լենդլորդերը վերացնում են հողի համայնական օգտագործումը, ցանկապատում արոտավայրերը և միացնում տերունական հողերին:

Աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով XVI դարում ընդլայնվեց համաշխարհային շուկան, և մահուդի պահանջարկն ավելի մեծացավ: Բացի այդ, «գների հեղափոխության» պայմաններում արժեզրկվում էր հողի սահմանված վարձավճարը, կրճատվում լենդլորդերի եկամուտները: Հողերի վարձակալության հանձնումով հողագործությունը դառնում էր ոչ շահավետ, ինչը նույնպես խթանում էր ոչխար-

րաբուծության զարգացմանը և արոտավայրերի ընդարձակմանը՝ ի հաշիվ գյուղացիական վարելահողերի՝ կալվածատիրական հողերը ժառանգաբար օգտագործող գյուղացիներին զրկելով այդ հողերից, որոնք ցանկապատվում ու վերածվում էին արոտավայրերի:

Այդ գործընթացը պատմության մեջ հայտնի է «ցանկապատումներ» կամ «ագրարային հեղաշրջում» անվամբ, որի մասին հայտնի է անգլիացի հումանիստ-ուտոպիստ Թոմաս Մորի՝ «ոչխարները կերան մարդկանց» պատկերավոր արտահայտությունը:

Ունեզրկվածների բանակը համալրեցին այն վանականներն ու գյուղացիները, որոնք զրկվել էին հողերից՝ XVI դարի կեսերից Անգլիայում մոտ 3 հազար կաթոլիկ եկեղեցիներ վերացնելու հետևանքով: Նրանց հողերը բռնագրավվեցին և վաճառվեցին կամ բաժանվեցին ազնվականներին: Այդ հողերը հետագայում օգտագործվեցին որպես արոտավայրեր՝ նպաստելով ոչխարաբուծության զարգացմանը:

Գյուղացիների մի չմչին մասն էր կարողանում աշխատանք գտնել քաղաքներում: Մյուսները դառնում էին թափառաշրջիկներ, մուրացկաններ, ավազակներ, որոնց դեմ պայքար էր մղվում՝ օրենքով սահմանելով դաժան պատժամիջոցներ, անգամ՝ մահապատիժ: Բացի դրանից, մուրացկաններին բռնում և տեղավորում էին հատուկ «տներում», որտեղից հնարավոր էր աշխատանքի վերցնել չմչին վճարով:

Գյուղացիները համառորեն դիմադրում էին ցանկապատումների դեմ: Հայտնի է 1549 թ. Անգլիայի արևելյան մասում սկսված գյուղացիական ապստամբությունը, որը հնարավոր եղավ ճնշել միայն կառավարական զորքերի միջոցով: Դրանից հետո իշխանությունը պաշտոնապես ճանաչեց հողերի գրավումը լենդլորդերի կողմից:

XVI դարի ագրարային հեղաշրջումը Անգլիայում անհրաժեշտ քանակությամբ հումք ու աշխատուժ տվեց մահուդի

արդյունաբերությանը և ապահովեց այդ ճյուղի արագ զարգացումը: Ջարգանում էին նաև մետաղագործությունը, նավաշինությունը, վառողի, թղթի, գարեջրի արտադրությունը: Հատկապես արագ ավելանում էր ածխի հանույթը, որի ծավալով Անգլիան արդեն առաջինն էր եվրոպայում:

Հարկ է նշել, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը ենթադրում էր նաև դրամական միջոցների կուտակում առանձին մարդկանց մոտ, որը Անգլիայում տեղի էր ունենում շատ արագ: Դրանց աղբյուրներն էին.

1. Մանուֆակտուրաներում, արհեստներում և ներքին առևտրում ստացվող եկամուտները:

2. Արտաքին առևտրում ստացվող եկամուտները, որոնք մեծ չափերի հասան աշխարհագրական հայտնագործություններից հետո, երբ Անգլիան դարձավ համաշխարհային առևտրի կենտրոն: Ստեղծվեցին մի քանի ընկերություններ, որոնց տրվեց Արևելքի երկրների հետ առևտրի մենաշնորհային իրավունք: Այսպես, Օստ-Հոլլանդական անգլիական ընկերությունը 1600 թվականից առևտուր էր անում Հոլլանդիայի հետ: 1581-ին ստեղծված Լեանտական ընկերության միջոցով Մերձավոր Արևելքից ներմուծվում էին բամբակ, մետաքս, համեմունքներ: Աֆրիկայից XVIII դարում Ամերիկա էր տեղափոխվում և վաճառվում տարեկան մոտ 100 հազար սևամորթ ստրուկ, որոնց ավելի քան 30%-ը՝ անգլիացիների կողմից:

3. Օրինականացված ծովահենությունը, որն անվանվում էր կապերություն: Անգլիական ծովահենների հարձակումներն ամերիկյան ոսկով ու արծաթով բեռնված իսպանական նավերի վրա տարեկան 3 մլն դոլարով (1 դոլարը = 3,5 գր. ոսկու) վնաս էր հասցնում այդ երկրին:

4. Պետական փոխառությունների համակարգը: Պետական ծախսերը ֆինանսավորելու կարևոր աղբյուր էին ներքին փոխառությունները: Կառավարությունը փող էր վերցնում առևտրականներից ու վաշխառուներից, որոնք հարստանում

էին ոչ միայն վճարվող բարձր տոկոսների, այլև արժեթղթերի առքուվաճառքի շուկայական գների տարբերությունից:

5. Հարկային և մաքսային համակարգը, որն արտահայտում էր տեղական արտադրողների շահերը: Սահմանելով բարձր մաքսատուրքեր և կրճատելով օտարերկրյա ապրանքների ներհոսքը՝ ապահովվում էր հայրենական արտադրանքի մեծ պահանջարկը:

6. Գաղութները, որոնք կարևոր դեր էին խաղում Անգլիայի տնտեսական զարգացման գործում: XVI դարում գաղութացվեցին հարևան Իռլանդիան և Շոտլանդիան, իսկ XVII դարից սկսվում է գաղութների գրավումը և նրանց հետ առևտրի զարգացումը:

Անգլիան XVI-XVII դդ. տնտեսական զարգացմամբ հսկայական թռիչք կատարեց՝ աշխարհագրական հայտնագործություններից հետո հետամնաց ագրարային երկրից վերածվելով համաշխարհային առևտրի կենտրոնի, դարձավ Եվրոպայի ուժեղագույն տերություններից մեկը: Զարգացավ նաև նավագնացությունը, ստեղծվեց առևտրային և ռազմական հզոր նավատորմ:

Սակայն կուտակված կապիտալի լիարժեք իրացման համար անհրաժեշտ էր վերացնել ֆեոդալական և միապետական կարգը, որի դեմ էր ուղղված 1642-1649 թթ. անգլիական բուրժուական հեղափոխությունը:

\*\*\*

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ Անգլիայում XVI-XVII դդ. ձևավորվում և ավելանում էր բուրժուական դասը, որի դիրքերը տնտեսության մեջ գնալով ուժեղանում են: Բուրժուականացվում էր նաև «նոր ազնվականությունը», որը ձեռնարկատիրական գործունեություն էր ծավալում և հարստանում «գների հեղափոխության» և գյուղատնտեսական ապրանքների թանկացման պայման-

ներում: Դրանց տնտեսական շահերն անտեսում էր միապետությունը, որի հենարանը ֆեոդալական ազնվականությունն էր: Բուրժուաները դժգոհում էին բարձր հարկերից, մի շարք կարևոր ապրանքների արտադրության և վաճառքի մենաշնորհներից, իրենց համար վտանգավոր մրցակից Ֆրանսիայի արդյունաբերական ապրանքների ցածր մաքսերից և այլն:

Չենվելով ունեզրկված և հողի համար պայքարող գյուղացիության վրա՝ բուրժուաները և «նոր ազնվականությունը» 1642 թ. պայքար սկսեցին ֆեոդալների և նրանց շահերն արտահայտող թագավորական իշխանության դեմ: Սկսվեց Անգլիական բուրժուական՝ աշխարհում առավել վաղ հեղափոխություններից մեկը: Երկրում 1649 թ. հռչակվեց հանրապետություն՝ Օլիվեր Կրոմվելի գլխավորությամբ: Չեղափոխության ընթացքում վերացվեցին ֆեոդալների քաղաքական ու տնտեսական արտոնությունները, բռնագրավվեցին թագավորի կողմնակիցների հողերը և վաճառվեցին բուրժուաներին և «նոր ազնվականներին»: Չեղափոխության հիմնական շարժիչ ուժը կազմող յոմենները հող չստացան, ավելին, ցանկապատումներն օրիկանացվեցին:

Չեղափոխությունը շարունակվում էր: Լուծելով իրենց խնդիրները՝ բուրժուաները համաձայնության եկան ազնվականների հետ. պահպանելով նրանց հողային սեփականությունը և միանալով կառավարական զորքերին՝ նրանք ճնշեցին գյուղացիության պայքարը:

Չեղափոխությունից հետո Անգլիայում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին բուրժուական արտադրահարաբերությունների արագ զարգացման համար: Երկրում իրականացվող մերկանտիլիստական քաղաքականությունը խրախուսում էր արդյունաբերության և առևտրի զարգացումը, վերացվում էին համքարությունները, արտադրության և առևտրի մենաշնորհները, և ազատ մրցակցություն էր հաստատվում



ներքին շուկայում: 1651 թ. ընդունվեց «Նավիգացիոն ակտը», որով Ասիայից, Աֆրիկայից և Ամերիկայից ապրանքներ կարող էին ներմուծվել Անգլիա կամ նրա տիրույթները միայն հայրենական նավերով, իսկ եվրոպական երկրներից՝ այն երկրների նավերով, որտեղ արտադրվել էին այդ ապրանքները: Օրենքն ուղղված էր Յուլանդիայի առևտրային հեգեմոնիայի դեմ, հովանավորում էր անգլիական առևտրականներին, խթանում նավատորմի և նավագնացության զարգացումը:

Այսպիսով, 1642-1649 թթ. բուրժուական հեղափոխությունն Անգլիայում ավարտվեց հողային և ֆինանսական արիստոկրատիայի քաղաքական դաշինքի ստեղծմամբ, որը երկար ժամանակ ապահովում էր անգլիական միապետության համեմատական կայունությունը:

Բուրժուական հարաբերություններն արագ՝ զարգանում էին նաև գյուղատնտեսության մեջ. տարածվում էին ֆերմերային տնտեսությունները, կիրառվում դաշտավարության առաջավոր ձևեր, պարարտանյութեր, մեքենաներ, օգտագործվում վարձու աշխատուժ, բարձրանում էր արտադրության արդյունավետությունը: Մյուս կողմից՝ ֆերմերային տնտեսությունների զարգացումը խթանում էր ցանկապատումները, արագացնում մանր արտադրողների ունեզրկումը և ներքին շուկայի ընդարձակումը:

Աշխատանքի հասարակական բաժանման խորացման և առևտրային կապերի զարգացման հետևանքով արդեն XVI դ. առաջացավ միասնական ազգային շուկա, որը կարևոր նախապայման էր արդյունաբերության զարգացման համար: Դրան նպաստում էր նաև քաղաքների բնակչության աճը. XVII դ. վերջին այն կազմում էր երկրի բնակչության մեկ քառորդը: Լոնդոնի բնակչությունն ավելի քան 500 հազար մարդ էր:

Սկսվում է ջրանցքների, ճանապարհների, կամուրջների կառուցումը, զարգանում է փոստային կապը: Արտաքին առևտրի ծավալով Անգլիան գրավում է առաջին տեղը աշխարհում: Նրա տեսակարար կշիռը Եվրոպայի արտաքին առևտրային շրջանառության մեջ 1750 թ. կազմում էր 20%:

Անգլիայում տարածվում էին մանուֆակտուրաները: Արդյունաբերության հիմնական ճյուղը բրդի արտադրությունն էր. բուրդը կազմում էր արտահանման 25-33 %-ը: Ավելանում էր մետաքսի, վուշի, տեքստիլ արդյունաբերությունը, բամբակագործությունը, որի կենտրոններն էին Լանկաշիրը, Յորքշիրը, Մանչեստրը: Զարգանում էր նավագնացությունը, մեծանում՝ առևտրային նավատորմի տոննաժը:

Տնտեսական զարգացման շնորհիվ պայմաններ ստեղծվեցին գաղութային տիրույթներ ձեռք բերելու համար: Անգլիան պայքար սկսեց Իսպանիայի, Պորտուգալիայի, Հոլանդիայի դեմ: Դրվեցին գաղութային կայսրության հիմքերը:

\*\*\*

Անգլիայում բուրժուական հարաբերությունների հաստատման համար վճռական նշանակություն ուներ արդյունաբերական հեղաշրջումը, որին նպաստեց 1642-1649 թթ. հեղափոխությունը, ինչպես նաև կապիտալի նախասկզբնական կուտակումը, որը դասական ձևով տեղի ունեցավ Անգլիայում:

Արդյունաբերական հեղաշրջումը անցում էր ձեռքի կամ մանուֆակտուրային արտադրությունից մեքենայական արտադրությանը: Անգլիայում այն սկսվեց ավելի շուտ՝ XVIII դարի 60-ականներին բամբակագործական արտադրության մեջ:

Արդյունաբերական հեղաշրջմանը նախորդեցին տեխնիկական հայտնագործությունները, որոնց շնորհիվ հնարավոր եղավ արդյունավետ օգտագործել էներգիայի աղբյուրները՝ ջուրը և քամին: 1568 թ. հայտնագործվեց խառատային հաս-

տոցը, կատարելագործվեց երկաթի մշակումը, մետալուրգիայում սկսվեց քարածխի օգտագործումը և այլն:

Անգլիայում մեծ ուշադրություն էր դարձվում կրթությանն ու գիտությանը: Լոնդոնում 1662 թ. ստեղծվեց Թագավորական միությունը, որը կատարում էր գիտությունների ակադեմիայի դերը: Ձևավորվեցին մի շարք գիտական կենտրոններ: Դեռևս XII-XIII դդ. հիմնադրված Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների կողքին հայտնվեցին Գլազգոյի, Էդինբուրգի համալսարանները, որոնք տալիս էին բարձրագույն տեխնիկական կրթություն: Կրոնական բարեգործական միություններին կից գոյություն ուներ տարրական կրթական համակարգը: Անգլիայում 1802 թ. ընդունված «Կրթության մասին» օրենքով ձեռնարկատերերը պարտավորվում էին ֆաբրիկաներին կից ստեղծել քառամյա ուսումնական դպրոցներ:

Կրթության և մասնագետների պատրաստման այսպիսի համակարգը նպաստում էր գիտության և տեխնիկայի զարգացմանը: Պատահական չէր, որ XVIII-XIX դդ. կարևոր գյուտերի և հայտնագործությունների հիմնական մասը պատկանում էր անգլիացիներին: Դրանցից են «թռչող մաքոքը», որը լայնորեն կիրառվեց գործվածքային արտադրության մեջ, «Ջեննի» մեխանիկական ճախարակը՝ 16-18 իլիկներով, մանվածքային մեքենան, գործվածքային հաստոցը և այլն:

Սկզբնական շրջանում մեքենաներն աշխատում էին ջրի ուժով, ուստի ֆաբրիկաները կառուցվում էին միայն գետերի ափերին, իսկ դա սահմանափակում էր նրանց տարածումը: 1769 թ. հայտնագործվեց շոգեշարժիչը, որը հեղափոխական նշանակություն ունեցավ և հնարավոր դարձրեց ֆաբրիկաների կառուցումն ամենուրեք:

Տեխնիկական հայտնագործությունները ներդրվում էին բամբակագործական, հետագայում նաև բրդի, վուշի և տեքստիլ արդյունաբերության այլ ճյուղերում: 1780-1820 թթ. բամբակագործական արտադրությունն Անգլիայում ավելացավ

ավելի քան 16 անգամ, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ գրեթե 27 անգամ:

Մեքենայացման շնորհիվ իջավ արտադրանքի ինքնարժեքը, մեծացավ բանբակյա գործվածքեղենի օգտագործումն ու պահանջարկը ինչպես երկրում, այնպես էլ արտասահմանում: 1780-1785 թթ. արտահանումն ավելացավ 355 հազարից մինչև 1.1 մլն, իսկ 1800 թ.՝ 5.4 մլն ֆունտ ստեռլինգ:

Փոփոխություններն ակնհայտ էին նաև մետալուրգիական արդյունաբերության մեջ, որտեղ կատարելագործվեց տեխնոլոգիան. հայտնագործվեց քարածխի միջոցով հանքաքարի ձուլման և թուջի (անագապղնձի) ստացման եղանակը, հետագայում նաև թուջից պողպատի ստացումը:

Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում ավարտվեց XIX դ. սկզբին, երբ հայտնագործվեցին մետաղահատ հաստոցները, և մեքենաշինությունը դարձավ ինքնուրույն ճյուղ:

Այդպիսով, ավարտվեց արդյունաբերության զարգացման մանուֆակտուրային փուլը, որը տևեց ավելի քան երկու դար, և անցում կատարվեց գործարանային արտադրությանը:

Արդյունաբերական արտադրության աճը արմատական փոփոխություններ առաջացրեց տրանսպորտում: XVIII դարի երկրորդ կեսին երկիրը ծածկվեց ջրանցքների խիտ ցանցով, որոնց միջոցով արդյունաբերական կենտրոնների արտադրանքը հնարավոր եղավ հասցնել դեպի ծով և նավերով արտահանել այլ երկրներ:

Շոգեմեքենայի հայտնագործումը նպաստեց ջրային և երկաթուղային տրանսպորտի ստեղծմանն ու զարգացմանը: 1811 թ. Անգլիայում կառուցվեց առաջին շոգեմավը, իսկ 1825 թ.՝ երկաթուղին: Վերջինիս կառուցումը խթանեց տնտեսական զարգացումը երկրի տարբեր շրջանների և արդյունաբերության ճյուղերի միջև մշտական ու ամուր կապ ստեղծելու և ապրանքաշրջանառությունը մեծացնելու միջոցով:

Արդյունաբերական հեղաշրջումն ունեցավ կարևոր սոցիալ-տնտեսական հետևանքներ: Պատմական կարճ ժամանակաշրջանում Անգլիան հետամնաց ագրարային երկրից վերածվեց առաջատար արդյունաբերական տերության: Նրա տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ 1850 թ. արդեն կազմում էր ավելի քան 45%, այդ թվում՝ ածխի հանույթինը՝ 60, թուջինը՝ 50, շոգեշարժիչների հզորության՝ ավելի քան 30%-ը: Սակայն արդյունաբերության հիմնական ճյուղը մնում էր տեքստիլը:

Անգլիան աշխարհում առաջին տեղն էր գրավում նաև արտաքին առևտրի ծավալով: Ֆաբրիկագործարանային էժան արդյունաբերական արտադրանքն իրացվում էր նաև արտաքին շուկաներում: Բացի դրանից, Անգլիան մեքենաներ արտադրող և արտահանող միակ երկիրն էր: 1770-1870 թթ. արտահանումը 16 մլն-ից հասավ մինչև 244 մլն ֆունտ մտ.: Առևտրային հաշվեկշիռն ակտիվ էր, և ոսկու դրամաշրջանառության պայմաններում այն կուտակվում էր Անգլիայում:

Փոխվեց երկրի առևտրային քաղաքականությունը. հովանավորչական համակարգից անցավ ազատ առևտրին (ֆրիտրեդերականությանը): Բարձր մրցունակություն ունեցող անգլիական ապրանքները մաքսային պաշտպանության կարիք չունեին: 1846-1852 թթ. վերացվեցին *նավիզացիոն ակտերը*, սննդամթերքի և հումքի շատ տեսակների ներմուծման մաքսերը, որոնք Անգլիայի առևտրատնտեսական հզորության պայմաններում կորցրել էին իրենց նշանակությունը:

Արդյունաբերական հեղաշրջման հետևանքով արմատական փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսության մեջ: Բրդի պահանջարկի մեծացման հետևանքով ցանկապատումները շարունակվեցին, և XIX դ. սկզբին գյուղացիությունն Անգլիայում գրեթե վերացավ: Այսպես, 1811 թ. նրանք կազմում էին բնակչության 35, 1817 թ.՝ միայն 14%-ը: Արագ

աճում էին արդյունաբերական կենտրոնները՝ Մանչեստրը, Լիվերպուլը, Բիրմինգեմը, Լոնդոնը, մյուսները:

Անգլիայի գյուղատնտեսության մեջ պահպանվում էր խոշոր հողատիրությունը: 250 լենդլորդերի էր պատկանում հողերի ավելի քան 50%-ը, որոնց մեծ մասը վարձակալմամբ հանձնվում էր ագարակատերերին: Արտադրության ինտենսիվացման հետևանքով բերքատվությունն Անգլիայում կրկնակի բարձր էր Ֆրանսիայի համեմատությամբ: Չնայած դրան, հողի վարձավճարը թանկացնում էր ագարակային տնտեսությունների արտադրանքը: Այն չէր կարող մրցակցել մեծ քանակությամբ եվրոպա արտահանվող էժան ամերիկյան հացահատիկի հետ: Անգլիական ագարակատերերը ստիպված էին կրճատել հացահատիկի արտադրությունը և մեծացնել անասնապահությունը, որի արտադրանքը մեծ պահանջարկ ուներ աճող քաղաքային բնակչության կողմից:

Արդյունաբերության, առևտրի զարգացումը նպաստում էին հսկայական դրամական միջոցների կուտակմանը և վարկի զարգացմանը Անգլիայում: 1694 թ. հիմնադրվեց Անգլիական բանկը, իսկ 100 տարի անց դրանց թիվն արդեն 350 էր:

Լոնդոնը դարձել էր համաշխարհային վարկի կենտրոն, սկսվել էր կապիտալի արտահանումը վարկերի ու փոխառությունների ձևով: Անգլիան դարձավ ոչ միայն «համաշխարհային ֆաբրիկա», այլև «համաշխարհային բանկիր», և դա ավելի էր մեծացնում նրա դերն աշխարհում:

Անգլիան նաև ամենամեծ գաղութատեր երկիրն էր: XIX դ. 40-ականներին ավարտվեց Յնդկաստանի նվաճումը, 1819 թ. անգլիացիները գրավեցին Սինգապուրը, 1824 թ.՝ Յոնկոնգը (հավերժ տիրելու իրավունքով), 1852-1853 թթ.՝ Հարավային Բիրման, գաղութացվեցին Ավստրալիան, Կանադան և այլ երկրներ: Անգլիայի գաղութային տիրույթները 1860 թ. կազմում էին 6,5 մլն քառ. կմ՝ ավելի քան 145 մլն բնակչությամբ: Նրանք ապահովում էին արդյունաբերությունը էժան հումքով

և ընդարձակ շուկա էին անգլիական ապրանքների, առաջին հերթին՝ տեքստիլ արդյունաբերության համար:

Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում ունեցավ սոցիալական կարևոր հետևանքներ: Ավելացան քաղաքները, որտեղ XIX դ. վերջին կենտրոնացված էր երկրի բնակչության 3/4-ը: Բարձրացան աշխատանքի արդյունավետությունն ու արտադրողականությունը, իջավ արտադրանքի ինքնարժեքը, ձևավորվեց բանվոր դասակարգը: Երկրում հաստատվեցին նոր՝ բուրժուական արտադրահարաբերություններ:

## ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԴԱ ՊԵՏՐՈՍԻ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԲՈՒԹՈՒԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

*Դասախոսության տեքստ*

Հրատ. խմբագիր՝ **Ռ.ԵՐԿԱՆԴՅԱՆ**

Համակարգչային շարվածքը և  
ծնավորումը՝ **Ն.ԽՉԵՅԱՆԻ**

Պատվեր՝ 618: Չափս՝ 60X84<sup>1</sup>/<sub>16</sub>:  
0,87 հեղ. մամուլ, 0,9 հրատ. մամուլ,  
1 տպ. մամուլ, 0,93 տպ. պայմ. մամուլ:  
Տպաքանակ՝ 80:

**«Տնտեսագետ» հրատարակչություն**

---

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության  
տպագրական արտադրամասում  
Երևան 25, Նալբանդյան, 128